



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԿԱՆ

Իցի՛վ թե

Ո՛հ, ի՞նչ ես դու, սե՛ր, երկնի հուր կամ ժրպի՞տ . . .

Չունի երկին աչացո կայծերն ու կապուտ,
Վարդը չունի քու լանջո ամբիծ, լուսափթիթ,
Չունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ:

Գիշերն երկնի կայծից, լուսնույն սխրադեմ,
Ցերեկն ալյաց, ծաղկանց ժպտիս . . . մեկո՛ւն գեթ . . .
Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղոթեմ,
Դու չ'ես շնորհեր նայվածք մ'ինձ հուր աչերեդ:

Արդյոք էա՞կ մ'ես թե երկնի զրվարթուն,
Կը նախանձին փայլիդ վըրա վարդ, լուսնակ.
Ձայնիկդ ապշած լըսելով քաղցր ու թրթրուն՝
Նոճերու մեջ կ'սրգա լըռիկ լուսինյակ:

Ծնեի իցի՛վ թ'հեացող հով մ'անուշիկ,
Եվ գգվելով երագք ճակտիդ այդ անսուգ՝
Տայի շունչը շուրթերուդ մեջ ես հուշիկ,
Լոկ սրբելով՝ եթե շողար աչքդ արտսուք:

Պարտեզդ իցի՛վ թե փթթեի վարդ լացող,
Եվ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերճ՝
Գունովս ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող,

Թոռմեի գիրգ ձեռքըդ տայի կյանքիս վերջ:

Բխեի ես իցի՛վ թ'առու մը վրճիտ,
Եվ երբ հուշիկ նստած մոտ իմ եզերքին,
Ցոլանար իմ հայելվոյն մեջ քու ժըպիտ՝
Պոտորելով կապույտ ալիքս՝ ցամքեին:

Ա՛հ, իցի՛վ թե լինեի ես ճառագայթ,
Շողշողայի դեմքիդ վրրա վայրիկ մի,
Խաբեի քեզ թ'ես ավելի գեղագարդ,
Ի'անուշաբույր մագերուղ մեջ մարեի:

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթե տըվիր մեկուն սեր,
Իցի՛վ թ'անոր գերեզմանին քարն լինիմ,
Եվ դու թոշնած գաս շնչե՛լ շուրջս . . . արտասվե՛լ . . .
Քեզ հըպելու համար հարկ լոկ գոլ շիրիմ . . .

1867